

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՆԱԽԱԳԱՐԷ ՀԻՄՆՈՒՄՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Թեմէն ներս սկսուած գեղեցիկ աւանդութիւնը շարունակելով, Հիւսիսային Գալիֆորնիայի Հոգեւոր Հովիւներու, Ծխական Խորհուրդներու, Թեմական Պատգամաւորներու եւ Կազմակերպութիւններու Ներկայացուցիչներուն Շրջանային ժողովը գումարուեցաւ Շաբաթ, Փետրուար 27ին՝ հիւրընկալութեամբ Սանթա Գլարա Հովիտի Գուփըթինոյի Սուրբ Անդրէաս Հայց. Եկեղեցւոյ:

Սոյն ժողովին մասնակցեցան հիւրընկալ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Հիւսիսային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդ՝ Արժ. Տ. Տաթեւ Քինյ. Յարութիւնեան եւ եկեղեցւոյ պատկան մարմինները, Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տիրան Քինյ. Աւագեան եւ եկեղեցւոյ պատկան մարմինները, Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Յովէլ Քինյ. Օհանեան եւ եկեղեցւոյ պատկան մարմինները, ինչպէս նաեւ Սագրամէնթոյի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ասողիկ Քինյ. Ժամկոչեան:

Ժողովի ընթացքին Սրբազան Հայրը տեղեկութիւններ հաղորդեց Առաջնորդարանի հոգեւոր առաքելութեան, ապագայ ծրագիրներու եւ յատկապէս Առաջնորդանիստ Մայր Տաճարի կառուցման եւ Սեպտեմբեր 11ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց. Կթողիկոսի ձեռամբ տեղի ունենալիք Օծման Արարողութեան, որուն հրաւիրուած են նաեւ թեմակալ կարգ մը Առաջնորդներ:

Ծխական Խորհուրդներու Ատենապետներ հակիրճ տեղեկութիւններ տուին իրենց տեղական եկեղեցւոյ գործունէութիւններուն եւ մշակած ծրագիրներուն մասին: Ժողովի ընթացքի գլխաւորաբար շեշտուեցան Ծուխերու միջեւ սերտ համագործակցութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ Ծուխերու եւ Առաջնորդարանի միջեւ գոյութիւն ունեցող կապի ամրապնդումը: Սրբազան Հայրը քաջալերեց, որ Ծուխեր ուխտագնացութիւն կազմակերպեն դէպի Առաջնորդարան եւ ծանօթանան Մայր Տաճարի համալիրին եւ ականատես ըլլան արձանագրուած յաջողութիւններուն:

Սրբազան Հայրը գնահատեց բոլոր ներկաներուն մասնակցութիւնը եւ յատկապէս շնորհակալութիւն յայտնեց Սուրբ Անդրէաս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին՝ Արժ. Տ. Տաթեւ Քինյ. Յարութիւնեանին, Տիկնանց Միութեան եւ հիւրընկալութեան բոլոր մասնակցողներուն:

Նկատի ունենալով, որ Սրբազան Հայրը Սուրբ Անդրէաս Հայց. Եկեղեցի կը գտնուէր, առիթն օգտուելով հանդիպում ունեցաւ անցեալ տարի իր կողմէ նշանակուած Առաջնորդի Խորհրդատու Մարմնին հետ, ուր նկատի առնուեցան կենսական կարգ մը միւթեր: